ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի
տեղակալ- գլխավոր գանձապետ

---------------------- Ա.Ջանջուղազյան

ք. Երևան «--»____200 թ.

«Յունիբանկ» ՓԲԸ-ի
Վարչության նախագահ

---------------------- Վ.Աթայան

ք.Երևան «--»____200 թ.

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության տեղական գանձապետական բաժանմունքների դրամարկղային սպասարկման»

Հայաստանի Հանրապետության Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը՝ ի դեմս նախարարի տեղակալ-գլխավոր գանձապետ պարոն Ա. Ջանջուղազյանի և «Յունիբանկ» ՓԲԸ-ն ի՝ դեմս վարչության նախագահ՝ պարոն Վ.Աթայանի (այսուհետ՝ Կողմեր), իրենց իրավասությունների շրջանակներում կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Սույն պայմանագրի առարկա է հանդիսանում «Յունիբանկ» ՓԲԸ-ի կողմից ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության թվով 25 տեղական գանձապետական բաժանմունքների դուրս գրած կանխիկ դրամի ստացման չեկերի սպասարկումը, դրանց հիման վրա կանխիկ դրամի տրամադրումը և վերջինիս հետ կապված կողմերի հարաբերությունների կարգավորումը:
Սույն պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման առավելագույն գումարը կազմում է 30,000,000/երեսուն միլիոն/ ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1. Սույն պայմանգրում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝
Նախարարություն՝ ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն.
ՏԳԲ-ն՝ սույն պայմանագրում հիշատակվող ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության տեղական գանձապետական բաժանմունքներ.
Հիմնարկ՝ ՏԳԲ-ներում սպասարկվող ՀՀ բյուջետային (պետական) հիմնարկներ, իրավաբանական անձիք.
Բանկ՝ «Յունիբանկ» ՓԲԸ-ն.

Կանխիկ գումարի ստացման չեկ (նաև չեկ՝) օրենքով սահմանված ձևով կազմված արժեթուղթ, որը պարունակում է ՏԳԲ-ի որևէ բանով չպայմանավորված գրավոր կարգադրությունը Բանկին՝ այն ներկայացնողին վճարել դրանում նշված գումարը կանխիկ ձևով.
Պայմաններ (սահմանված կարգ)՝ Սույն պայմանագրով սահմանված արարողակարգերը և պայմանագրի անբաժան մաս կազմող, ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2000 թվականի մարտի 29-ի N 38 հրամանով հաստատված՝ «ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի

նախարարության տեղական գանձապետական բաժանմունքների կողմից կանխիկ դրամի ստացման չեկերի դուրս գրման և ՀՀ առևտրային բանկերի կողմից այդ չեկերի սպասարկման ընդհանուր պայմանները»:
Պահանջագիր՝ սահմանված կարգով ՏԳԲ-ի դուրս գրած չեկերին համարժեք՝ վերջինիս կողմից բանկ ներկայացվող կանխիկ դրամի ստացման պահանջ:
Բանկային ամփոփ ռեեստր՝ սահմանված կարգով սպասարկված չեկերի հիման վրա բանկի կազմած գրությունը
2.2. Բանկի կողմից չեկերի սպասարկումն իրականացվում է սահմանված կարգով:
2.3. Սույն պայմանագրի շրջանակներում բանկ ներկայանալու նպատակով չեկեր դուրս գրելու լիազորությամբ օժտված ՏԳԲ-ների ցանկը կցվում է՝ Հավելված N 1, որը սույն պայմանագրի անբաժան մասն է:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

3.1. Նախարարությունը պարտավոր է.
3.2. Ապահովել՝ ՏԳԲ-ի կողմից սահմանված կարգով հետևյալ գործառույթների կատարումը.
ա/ չեկերի դուրս գրումը.
բ/ բանկին տրամադրել ՏԳԲ-ների կնիքների, չեկի և այն դուրս գրելու իրավունք ունեցող անձի /անձանց/ ստորագրությունների նմուշները.
գ/ չեկերի դուրս գրման օրը՝ մինչև ժամը 16^{30} բանկ ներկայացնել պահանջագիր.
դ/ բանկի կողմից սպասարկված չեկերին համարժեք գումարը փոխանցել վերջինիս նման պահանջ (ռեեստրի) ստանալու օրվան հաջորդող մեկ բանկային օրվա ընթացքում:
3.3. Մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը բանկին փոխանցել սպասարկման վճար՝ վերջինս կողմից տվյալ ամսվան նախորդող եռամսյակի ընթացքում սպասարկված չեկերին համարժեք գումարի հավելված N 1-ով սահմանված տոկոսների չափով:
3.4. Սույն պայմանագրի 3.2 կետի «դ» ենթակետի պահանջների խախտման դեպքում յուրաքանչյուր ուշացված օրվա համար բանկին վճարել տույժ՝ չփոխանցված գումարի 0.1%-ի չափով:

4.ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ և ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱԲԱՐ ԻՐԱՎԱՍՈՒ ԵՆ.

4.1 Բանկի կողմից սահմանված կարգի պահանջները խախտելու դեպքում ժամկետից շուտ դադարեցնելու պայմանագիրը: Ընդ որում սույն պայմանագրի 3.2. կետի «դ» ենթակետին համապատասխան իրականացվելիք վճարումներից գանձել սույն պայմանագրի կետ 7-ով նախատեսված տույժերը:
4.2 Չընդունել կանխիկացման չեկի դիմաց բանկի կողմից տրամադրված այն դրամանիշները, որոնք հնամաշ են և չեն համապատասխանում ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ՀՀ դրամի վճարունակության հատկանիշներին:

5.ԲԱՆԿԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է.

ա/ Մինչ ՏԳԲ-ների կողմից չեկերի նմուշների տրամադրումը, իր միջոցների հաշվին ՏԳԲ-ներին տրամադրել չեկային գրքույկներ՝ դրանց նմուշները նախօրոք համաձայնեցնելով Նախարարության հետ:
բ/ Անմիջապես և առանց վերապահումների սպասարկել սահմանված կարգով հիմնարկների կողմից բանկ ներկայացված չեկերը:
գ/ Չեկերի դիմաց վճարը կատարել ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ՀՀ դրամի վճարունակության հատկանիշներին համապատասխանող պիտանի դրամանիշներով:
դ/ Բանկային ամփոփ ռեեստրները սահմանված կարգով, մինչև յուրաքանչյուր օրվա ժամը 16^{30} ներկայացնել ՏԳԲ:

6. ԲԱՆԿՆ ԻՐԱՎԱՍՈՒ Է.

6.1. Չսպասարկել այն չեկերը, որոնց դուրս գրումը և բանկ ներկայացումը չի համապատասխանում սահմանված կարգին:
6.2. Չընդունել և հետ վերադարձնել այն պահանջները, որոնք ներկայացվել են սահմանված կարգի խախտումով:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Նախարարությունը պատասխանատու է բաժանմունքների կողմից դուրս գրված չեկերի և դրանից բխող պարտավորությունների կատարման համար:
7.2. Բանկը պատասխանատու է սահմանված կարգով իրեն ներկայացված չեկերի չսպասարկման համար: Բանկը միանվագ վճարում է տույժ չսպասարկված չեկի (չեկերի) համարժեք գումարի 0.3%-ի չափով:
7.3. Բանկը պատասխանատվություն չի կրում կորցված /գողացված/ չեկերի սպասարկման համար, եթե այդպիսի չեկը սպասարկվել է սահմանված կարգին համաձայն մինչև ՏԳԲ-ների կողմից դրա կորստի մասին տեղեկացվելը:

8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն պայմանագրի հետ կապված վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Այն դեպքում, երբ բանակցությունների միջոցով կողմերի միջև ծագած վեճերը չեն լուծվում կիրառվում են քաղաքացիական դատավորության մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերը:

9.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2007 թվականի հունվարի 1-ը:
9.2. Եթե պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց մեկ ամիս առաջ Կողմերից և ոչ մեկը չի դիմել սույն պայմանագիրը դադարեցնելու առաջարկությամբ, պայմանգիրը համարվում է երկարացված մեկ տարով՝ նույն պայմաններով:
9.3. Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն միևնույն իրավանական ուժը և համապատասխանաբար տրամադրվում են Կողմերին:

10. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Սույն պայմանագրում փոփոխություններ կարող են կատարվել Կողմերից որևէ մեկի գրավոր առաջարկության առկայության դեպքում երկկողմանի համաձայնության պայմաններում:

11. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	«Յունիբանկ» ՓԲԸ
ք. Երևան, Մելիք-Ադամյան 1	ք. Երևան, Ամիրյան 2